



ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒԾԱԿՅԱՆ

Խ Ր Ի Մ Յ Ա Ն Հ Ա Յ Ր Ի Կ

(Հատվածներ)

(Փարիզ, 1925 թ.)

Եթե հարկ ըլլար, պատմագրական հին մետուի մը հետևելով, մեր պատմության մեն մի շրջանը ներկայացնել միակ մարդու մը դեմքովն ու անոնվը, ապահովաբար բոլոր ձայներն ու կարծիքները պիտի միաբանեի՛ն Հայոց արդի պատմության վերջին շրջաններն մին տիտղոսելու կամ կնքելու համար անոնվը Անոր, զոր ազգն համորեն միահամոռ զգացմամբ կոչեց և մեծարեց իբրև Հայրիկն Հայոց:

...Մեծ մարդերը անձնավորյալ արտահայտությունն են իրենց ցեղին ու ժամանակին ոգիին. անոնց կյանքին պատմությունը պետք է որոնել ոչ թե հույս մը թվականներու և ծանություններու մեջ, որոնցմով կիյուավի կենսագրություն մը, այլ լուսաբնությանը մեջ այն ճգտումներուն և շարժադիրներուն, որոնք կհատկանչեն անոնց ապրած ժամանակն ու միջավայրը:

Խրիմյան, արդի հայության հոգին ու խնճմտանքը արձանացնող ամենեն կոթողական դեմքերն մին, հարազատ ծնունդն է իր ցեղին ու դարուն:

(Էջ 13)

* * *

ՍՐԾԱԽՈՍԻԿ ՔՍ.ՐՈԶԻՉԻՉԸ

Զարմանալի է նկատել որ մտավորական-ներուն չերմ բարեկամությունը վայելող այս

կրոնավորը Պոլս մեջ ոչ մեկ տեղ կրախի մյուս դասակարգերուն կամ խմբակցությանց ատելությանց: Հարուստին ու աշխատավորին՝ գիտունին ու անուսին մարդն է հավասարապես, ամենուն սերը ունի իր սրտին մեջ, և առարկա է ամենուն հարգանքին գավառացի բանվորությունը իր անոնվը կերպու. ուստամի հայությունը «Հայաստանի հրեշտակ»-ը կտևեմ իր վրա. և հայատանից երեկի վարժապետին և այսօրվան վարդապետին մեջ սկսած է արդեն երկիր Հայոց Հայրիկը, ազգին սերն ու համարումը աղինքնոյն անոնց էակը: Եկեղեցիներու ընմերը ամեն տեղ բաց են իրեն. դպրոցներուն մատաղ ուսանողությունը իր ներկայությամբ կիանդավառվի: Կտսու ամեն տեղ ու միշտ. իր խոսքը զերծ է ճարտարաբնության արվեստեն, բայց հոգիները ցեցելու գաղտնիքն ունի. իր հոգուն է Հայաստան միայն. անոր օդն ու ջուրը, առվակներն ու պորակները, ձորերն ու սարերը, մշոշին կյանքն ու հոտաղին սրինգը, վանքերն ու ավերակները, հայ շինականը և լեռնցի քորդը, Կայենի հարվածը և Արեկի արյունը: Իր միակ ներշնչարաններն են Ավետարանն ու հայոց պատմությունը. այլաբանությամբ կզարդարեն իր պատկերները, առակներով կհամեմեն իր խրատները. զվարթ խոհանքը և հառաջանքի ճիշը, որոնք իր պերճախտության շիղը մնա-

ցին մինչև իր վերջին շունչը, արդեն իսկ իր քարոզներուն ամենն ոգելից կողմը կշնեն այդ ատենեն:

(էջ 26)

ՀԱՍՈՒՆ ՓՈՐՉԱՌՈՒԹՅՈՒՆ

Կրթական ու բնակական պաշտոնները, ուսուցչությունը և քարոզչությունը, զոր աշխարհական հաջողությամբ այսինքն գիտակցությամբ և զգացումով վարած էր մինչև այն ատեն, ժողովորդին կանքեն անցնող այն երկու ճամքաներն էին, որոնք զինքը պիտի առաջնորդեն բո՞ւն իր կոչումին դաշտը, հովական ապարեզը: Խրիմյան ԲՌԱ Էր Բիմակ, իր պրոֆեսոր ու մոքին ամբողջ եռանդվան ու գուանակված ույժերով:

Քառասուն հազիվ անցած, մարդկային հասակի այն տարիքին մեջ՝ որ երիտասարդության երազները ծշղված սկզբունքներու հատակության կերպածին պայծառ իմացականության լուսին տակ, այս գծած էր իր ուրծություններու ուժին: Ուստումներով չեղ որ հասած էր այն կետին, այլ քայլ առ քայլ անցնելով դժվարության բոլոր կնճիռներեն՝ թշվառության բոլոր հանգրվաններեն: Պետք է այս ժողովուրդը ազատել իր կյանքին վրա ճշշող անիրավ ուղիղ կապանքներեն: Ահա՝ իր սևուամսածումը՝ իր հապատակը: Ան կրնա ի՞նըն իսկ կատարել իր ազատագրումը. քավական է որ իր մեջ կենագործվի՞ն խորտակված կոճներու այն արմատները, որոնք ցեղային առաքինությանց անմեռ փշրանքներն են, իր ծոցին մեջ՝ իր հոգվույն խորը թաղված: Ահա՝ և իր դավանանքը:

(էջ 35)

ԱՐԱՔԵԼԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Երջանիկ մահկանացու, որ կզգա թե առայսի մը միրտը կրաքախն իր կործին ները...

Այդ գգացումը, իր կոչումին զրուղագույն ըմբռնումովը ամրապնդված, օրեօր ավելի կխորության, կրոսավորու իր սերը դեպի ժողովուրդը, դեպի «արմատ»-ը, որուն կենդանացման ԲՌԱ է իր միակ ինձը: Ու ամենքը, բոլոր անոնք՝ որոնց միրտն ու լեզուն մինչև այն ատեն խցլված ու խցկված էին երկոյնեն ու պատկառանքնեն, քաջակերպած՝ արգամատանքի ժպիտեն, որ իր մոգիչ նայվածքին մեջ կնշունքը և խանդաղատանքի կաթողին քաղցրութենեն, որով իր շինչ ձայնը կթրուար, կմոտենան իրեն, իրոն քարեկամի մը, որ չէ ճանչցած երբեք կեղծիքը: Ծվարած գնդշկներցը, անտեսված վարժա-

պետը, տարիներեն ի վեր բացակայող ամուսնույն կարոտովը թառամած նորահարսը, վաշխառուին՝ քորդին՝ ոստիկանին ճիրաններուն մեջ գալարվող շինականը, քիսահամ օրենքներու խատույցանց և նորահամար տորքերու ծանրության տակ հեծող վաճառական ու երկրագործը, ամենքը իրեն կո գան, մին արցունքը աչքին, մյուսը՝ աղերսների գիրը ձեռքը:

(էջ 35—36)

Ո Ւ Խ Տ Ը

Դու, Տեր Ամենակալ Աստված, որ գիտես քննել մարդոց ծածուկ սիրտ և երիկամունք, իմ սիրտ բաց է Քո առաջ. Ես չեմ կարող կեղծել և ստել. կաղաքեմ Քո տաճարին մեջ խաչին և Ավետարանին առաջ, տո՞ր ինձ Քո շնորհ և զրություն, որ կարենամ իմ ծանր-ծանր պարտականություններս ճշդությամբ կատարել իրոն հայոց ազգի Հայության: Տո՞ր ինձ Քո հզոր արդարության և ճշմարտության հոգին, որ պատրաստ լինիմ կատարել Քո այն մեծ պատվերն: «Տաղ Աստուծոյն՝ Աստուծոյ և կայսերն՝ կայսեր»:

(էջ 141)

Օ Ծ Ո Ւ Մ Ը

Կարծիք կա թե հայրապետական օծման կարգը հայ քագավորներու օծումին եկեղեցական ձևի վերածումն է պարզապես, և թե, եւեւնաբար, անոր մեր մեջ գործադրությունը կմկնի ազգին արքայական գահը կորսնցնելն մեջ վերջը միայն:

Առանց զրադելու հու այդ կարծիքին պատմական արժեքով, ըսենք միայն թե հայ կաթողիկոսի ձեռնադրության և օծման արարողությունը արդարու եկեղեցական աշխայի հանդիսավորություն մըն է մեր մեջ, որ կրոնական վանությունը և արքունական մեծ վայելչությունը գիրար կլրացնեն գեղեց կապես:

Արարատյան դաշտի գյուղերեն և Կովկասի ու Ռուսաստանի բոլոր քաղաքներեն ծովածակալ քազմություն մը լեցված էր Վաղարշապատ:

Չուզելով որ ժողովուրդը գրկվի հանդեսին միսիթարութենեն, Հայրիկ կարգադրած էր որ օծումը կատարվի Մայր տաճարի դռան առշեվ. ինչ որ տեղի ունեցավ կարգապահությամբ և պատկառանքով: Մինչ երկրուասան արքային կոպուսներ կօծեն իր գագաթը, Հայրիկ, բնական քարձրավանդակին վրա ծնրաչոր, կարտասվեր լոիկ, աղոթելով ի խորոց սրտի՝ իր սիրեցյալ հոտին փրկության համար:

Խորեն Ծափթան.

Խորեն Տեղի ու առաջնութիւնը
Երբ մաստիկ պատճենահան
լուսից աշխատ չի ունենաւ, ոչ է օգուզից
յանդ լաւածից. Եթի Տեղի սե-
շափթի աշխատ. ովհուաց է թի յի զուգը,
Եղիլ, Երս հարաց ու մի այս ցեղական
է Տիգրան. Ենցան սոցուածք ժիշտանց
ԵՇիլի ու ապահով յունաց:

Այս Եթի սիցան քափթ ոյք
 ո այս ուղարկեց Ռուբենովի ու
 յանձնեց առաջազնութիւն. ուրաքանչ
 այսպիս անդեպ է ա: Իւ յանձնեանց
 Այս պիստ Ոչի քի, ուրի ոչ եւ ցայ,
 շաբ և յատիպի յանձնեանցին ուրի:
 ուրի յատիպի ուր. յանձնեանց ուրի:
 յայս անձնաց պահան ներկ եւ անց աւ
 և ոչի: Եւ պահան ներկ եւ անց աւ
 օյ պահան ըստ անձնաց կամ պահան օյ
 և ոչի պահան ըստ անձնաց կամ պահան օյ
 ոյ պահան քափթ յանձնեանց:
 Քափթի. ուրու շոյ շոյ անձնաց յանձնեանց
 ըստ անձնաց կամ պահան օյ, անձնաց
 պահան քափթ յանձնեանց:
 Ներական պահան ու բականական
 Քայլու ուրու մեռ: Վաթի Բայր այս

Պատարագեն վերջը, զոր ինքը մասուց, և որուն միջոցին իրենց խոմքերով կերգեին Շահնային և Կարս-Մորզա, երբ Ն. Ս. Օծություն, հայրապետական քողը գլխին, Վեհարան կրարձանար թափորով, ժողովրդական խանդավառությունը իր գագաթնակետին էր հսկած:

Վանքի մեծ բակին մեջ հայ աշուղները կերգեին ու կնակագեին սրտահուզ ոգևորությամբ.

«Սիրովուն-սիրվուն դրոներ ունիս,
Ուկեցրած դրոներ ունիս...
Էջմիածնի՝ ուլի պունը.
Քեզմո՞ւ կանգնի հայուն տունը»,

Անդին, Ներսեսյան լճի ափերուն վրա վաղարշապատեցի օրիորդներու խոմքը կերգեր.

«Հայրիկ, Հայրիկ, քո հայրնեցիք
Վասպորական մեր աշխարհ...»:

Դուրսը, Տրդառա դրան առջն, մեծ հրապարակին մեջ, ձիարշավի և Շիզակախաղի հանդեսները Նավասարդյան սովոները կիցնեցնեն:

Ու մինչ վերը, Վեհարանի «Ծաղկյա դահլիճ»-ին մեջ, Լուսավորչի գահուն առջն, հոգեկողրականաց դասը սրտաթունդ կեղանակեր.

«Յառաքելական Աթոռ նատար,
Երանելի սուրբ Հայրապետ»:

Հայրիկի կուրծքին տակ, նախնաց անմահական ոգին էր որ կարթնեար ժողովուրդին սրտին մեջ:

(Էջ 142—143)

Ի Ր Հ Մ Ա Յ Ք Ը

Իր պարթևնական հասակը՝ զոր չէր կրցած սակայն կորացնել ժամանակին բնոր, վառվուն աչքերը՝ որոնց մեջ արծիվի կորովարի ակնարկը կշղար, պատկառելի ալիքը՝ որ նոգիովն հորդահոսան շնորհը կծավալեր կարծես ամբողջ անձին վրա, ու ջինջ թրթոռուն ձայնը՝ որ երկնային դաշնակության մը անուշ պատրաճը կուտար ունենիդիներուն, երանավես բերկրանքի ի՞նչ խանդավառությամբ կզեղվին ճեմարանին գմբեթարդ մեծ սրահը, երբ ծերունի հայրապետը, հայաստացի աջուղի մը կամ միջնադարյան հագներգակի մը խոնարին երևույթին տակ անհունապես բարձրացած, կոգեւորեր Մայր Աթոռու նոգնոր գերդաստանը իր տալերուն նոգիացյալ քաղցրությամբը:

(Էջ 180)

Ի Ր Մ Ա Հ Ը

Խրիմյան մեռած... այս բոթը, զոր հեռագրաթերը նո՞յն օրն իսկ հաղորդեցին ամեն կողմ, տիեզերական սարսուն մը անցուց հայության սրտեն:

Իր զառամայ հասակը և վաստիծած վիճակը անձանոթ չէին արդարն ոչ մեկուն. բայց ամենը, տեսակ մը կանխակալ զգացուով կարծես համակված իրեն նկատմամբ, ցնցի անակնելայի մը տպավորությունը միայն կրեցին իր մահագոյժեն...:

Բայց ինչո՞ւ, ի՞նչպես, Աստուծուն և հայութիք մարդը ինքը չէ՞ր որ մարգարեական հոգվով բառ էր բազմից թե իր մատով պիտի օծեր... և հետո մտներ հավիտեական վարագույրեն ներս:

Այս խոռվքն է որ կալեկոներ ամենուն հոգին:

...Ամերկիմիտ ուխտավոր գաղափարի մը՝ որուն հավատքը կրոնքն էր իր նոգիովն, պետք է ապրեր նա մինչև որ կարենար իր կուրծքին վրա սեղմել և համբորել իր պաշտամ գաղափարին մարմնացումը:

...Կհավատամ թե նա փակեց իր աչքերը վերածող Հայաստանի քրթմահաներձ արշալույս տեսնելու վերջ միայն:

Անոնք որ նոգեվարքի իր վերջին վայրկյանին իր մահվան մահիճին մոտ կգտնվեն, իզուր սպասեցին որ Հայրիկ իր ազգին ու եկեղեցին ուղղված վերջին բառ մը պահնեն իրենց: Ոչ մեկ խոսք. վերջին հառաջանք մը՝ այս մը միայն. որմէ վերջ քաղցր ժայիտ մը լուսավորեց դեմքը, երբ Սուրբը ոչ ևս էր արդեն:

Պետք է հայ ըլլալ խորապես, այսինքն հավատացյալ մը՝ այս ազգին ապագային, հասկնալու համար թե այդ հառաջանքը իր խաղացած հողմնուանքին հուսկ հետին ճիշն էր լոկ. ու ժայիտը՝ իր ողջագորումը մարմնավորված իր հուսին հետ:

(Էջ 214—215)

Ի Ր Հ Ի Ծ Ա Ս Ա Կ Ը

...Տասերեք տարիներն ի վեր, այլևս պատմության կվերաբերի Խրիմյան: Իր մահվան հաջո՞րդ տարին իսկ, Էջմիածնի մեջ, որ մինչև վերջը չպակեցան բնավ իր քննադատները, իր թողած բացը ամենքը կզգային արդեն: Այդ զգացումը հետզինետե տարածեցավ Էջմիածնին դուրս ալ, և որքան անցան տարիները, այնքան ավելի քաղցրացավ իր հիշատակը. իր գերեզմանը ուխտատեղի մըն է արդեն, և ունէ հայ կամ

ՊԱՊԻԿ ԵՒ ԹՈՌՆԻԿ

ԳՐԵՑ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ

ԳԻՒԼԱԿԻԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ

ԹՈՌՆԻԿՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԵՒ Ի ԼՈՅՍ ՀԱՆԻՆ ՅՈԺԱՐԱԿԱԿԱՄ ՓՈՒԹՈՎ

ԵԶՆՈՒԹԵՎԵՆ ԵՎԸԱԲՔ

ԿԻՒԼՊԵՆԿԵՆ

ՏՊԱԳՐԵՍԱԼ

Ի ՄԱՅՐ ԱԹՈՌ ԱՐԱՐԱՏԵԱՆ

ՄՐՐԱՅ ԷՀՄԻԱՃՆԻ

1894 = ՈՅԽԳ

օտարազգի, որ կայցելեն Մայր Աթոռ, չի
մեկնիր ամկե, առանց վայրկյան մը կանգ
առնելու և մտածելու իր սնարին վերն: Հայ-
րիկ սուրբ մըն է արդեն ժողովուրդին հա-
մար:

Այսպիսի է ահա ներկա սերունդին զգա-
ցումն ու կարծիքը Հայրիկի հիշատակին
հանդեպ:

...Սզգային պատմության Ակարասրահին
մեջ իր պատկերը պիտի մնա միշտ պայծառ
ու գեղեցիկ, ու ամենքը պահպանողական
թե հեղափոխական, աշխարհիկ թե կղեր,

գիտուն թե անուս, հարգաճիքով պիտի խո-
նարհին անոր առջև:

Իրեն եկեղեցական կարգե ազգային գոր-
ծիչ, պիտի զուգակշռվի միշտ երկու ներ-
սեսներուն, Աշտարակեցիին ու Վարժապետ-
յանին հետ, ու անոնց նման, պիտի մնա մեր
պատմության նոր ժամանակաց ամենն
թանկազին փառքերեն մին:

Անտարակուս, Հայրիկ չունեցավ այդ եր-
կութեն ո՛չ առաջինին ուազմական ձիրքերը և
ոչ երկորդին դիվանագիտական շնորհնե-
րը. իր կազմվածքին բերմունքն էր ալդ. բայց

գլոց-գերազանցեց զանոնք հեղափոխական ավլունի նորդամուսան հեղեղումովը, որտես անցանաբեկի առյուղներն եղան իր խոսքն ու գրիչը, և իր կյանքն իսկ համակ, և այս տուրքն էր իր հոգվուն:

(Էջ 216—217)

ԻՐ ՆԿԱՐԱԳԻՐՆ ՈՒ ՀՈԳԻՆ

Արդար դատի մը աճեկեղծ նվիրյալը եղավ Խրիմյանը:

Այդ դատը իր ցեղին գաղափարն էր, գգացումով ու հավատքով երկնված և ապրված մտածում՝ որ հօգոր և ազնիվ հոգիներու մեջ միան կրնա դնել իր բույնը:

Մեծ գաղափարի մը շահակի՞րն ըլլալ. այս էր իր կոչումը, զոյ արդարն լինվ իրականացոց իր բովանդակ կյանքին մեջ, իր գործունեության բոլոր կողմերուն վրա:

Անցավ բոլոր խնարի և ստվերախիտ արամետներեն, ուսկից անցելի կարառադրենի իրեն՝ հարկն ու հանգամանքները, շնորհու համար իր ճրագին դեռ առկայի բոց: Եղավ այս ամեն բարձունքները՝ որ հրավիրեց զինքը ժամանակին ոգին, որպեսզի հեռուն և քիչ մը ամեն կողմ ճառագայթե այդ լուսը:

...Առանց իր քառամյա պատրիարքական պաշտոնավարության՝ Սահմանադրությունը պիտի մնար նախադատությանց համարադրություն մը լոյ ու հայկական հարցը պիտի վերջունվեր անպայմանորեն, ով գիտե ե՞րբ և ի՞նչպիսի պարագաներու մեջ վերնելու համար օր մը:

Կհամարձակիմ ըսել, Խրիմյանի վարչական տաղանդը հայտնվեցավ ամենեն ավելի պատրիարքության միջոցին, այսինքն այն պաշտոնին մեջ, որ իր հայկական հարցը պատենտ ավելի դատապիետեցին զինքը, իբր անվարչագնութեան:

Վարչագիտությունը՝ պարագաներն ու պատեմությունները պարտկերու և մակերեսային խաղաղություն մը պահովելու ճարտարվորակը չէ քնամի: Նա' է ճշմարիտ վարչագետը որ ամեն բանե առաջ գիտե ու կրնա իրեն համար ընտրել գործունեության որոշ նախառակետն մը, և հետո կիրարկել բոլոր ներելի միջոցները, հաջողցնելու համար անոր իրագործումը:

Խրիմյան, պատրիարքության հիավերն ընդունելեա առաջ՝ իր մտքին մեջ ճշեց նախ իր ընելիք գործը, ծրագրեց անոր տանող ուղեգիծը, և հետո միայն ընդառաջեց ազգովին հայտնված բաղմանքին:

...Վարժուակետյան և Դամբիլյան առաջին վարկյանեն պատրաստ գտան արդեն իրենց

հետևելիք ողղությունը, իսկ Օրմանյան ընտհանուր թոռն ու բոնի այն շրջանին, իր կազմակերպության ամբողջ տաղանդը հազիկ պիտի կրնար բավեցնել երևույթները և քիչ մըն այլ կացությունը փրկելու հնարքին:

Միայն Խրիմյանն էր որ իրեն հետ այդ այտովն վու բազմեցուց գաղափար մը, ու պաշտպանեց ու իրականացուց զայն, իմաստության կամքի ու շրջակայաց համբերության մարդկորեն հնարավոր բոլոր միջոցներու, մինչև որ կերպուն ճանչացավ իր թիկունքը, ու զավառը ա'լ Պոլս հայության սրտին մեջ սպառող ովքը հանդիսացավ:

...Պարզ կյանքի մարդ, զգացումի և գաղափարի մարդ, բայց հավետ գործի և սկզբունքի մարդ եղավ նա, ավելի կամ նազ աստիճանով մը, իր բոլոր ասպարեզներուն մեջ, Վարագի վանահայրութենեն սկսելով մինչև Էջմիածնի կաթողիկոսությունը, մինչև իր վերջին շունչը:

Սրտի և կամքի իր այդ անփոխանակելի առավելություններուն շնորհիվ էր որ Էջմիածնի Հայաստանյաց եկեղեցու պաշտոնավայրը, Խրիմյանի օրով իսկական եղավ հայ ազգային կյանքի կերպոն, որով ուղղվեցան բոլոր նայվածքները, որով մեջ ամեն հայ կթվեր լսել իր հսկ սրտին բարախումը՝ պաշտպան Հայուապետի մը սրտին մեջ:

Անցած են հիմա այս ամեները. պաշտոնական պատուներու և վարչական դիրքերու վրա Հայրիկի թողած հետքերեն՝ Պոլս պատրիարքարանին մեջ թերևս Ակար մը միայն ու Էջմիածնի գավիթին մեջ տապահաքար մը կմնան այժմ, ժամանակալիցներու հիշողության մեջ պահված հուլ մը մանրադեպերու հետ, որոնք չենք գտներ թե որքան կրնան ապրի տակավին:

Բայց կա բան մը, որ պիտի տնեն ընդերկար, որուն մեջ Հայրիկի անունն ու հոգին պիտի ապրի մշտապես. իր գրական գործերն են անոնք: Լավագույն և մեծագույն Հիշատակարանը, որ պիտի անմահացնե Խրիմյանի հիշատակը, է այն զոյ որ հներն իսկ կերտեց իր գրչունք. իր գրականությունը:

Իր զոյգ Հավափրակները, իր Արծիվն ու Արծիվը, Մարգարիտն ու Խաչի ճառը, Վաճգույժն ու Հայգույժը, Ժամանակ և խորհուր յորը, Դրախտի ընտանիքը, Սիրաք և Սամկեր, Պահիկն ու Թոռնիկը հայ մատենագրության ազգայնական բաժինն մեջ պիտի ունենան իրենց հնքնուրուց տեղը, և անմոռաց պիտի թողուն Խրիմյանի անունը:

Այս գործերուն ամբողջական մեկ հրատակությունը՝ միօրինակ ձևով բանի մը հատորներու մեջ, պատշաճ հառաջարանով և ծանոթություններով ուսումնասիրված, պիտի երևան թերե անոնց մեջ զգացման և մտածումի անսպառ գեղեցկություններ, ո-

րոնք մեր արդի գրականության ամենեն անգին հարստություններն պիտի նկատվին իրավամբ:

Խրիմյան անոնց մեջ պիտի գգացվի միշտ այնպես ինչպես իր այս կամ այն ասպարեզին կամ պաշտոնին մեջ քանի մը ձևական թերթությանց տակ ավելի աշքառո՛ նույնիսկ ավելի գրավիչ դարձած մեծություն մը:

Ընթերցողը անոնց մեջ պիտ գտնե ո՞չ թե հրարվեստ գրագետը այլ խորհուրդով և գգացունով հորդ հայրենաւոր մատենագիրը, որ ամեն մեկ էջին վրա նոր սիրուն խորհըռդություն մը ունի կամ այլարանություն մը, կրոնին ու հայրենիքին մերը ավելի քան ավելի արծարծելու համար սիրտերուն խորը:

Ու անփոյթ ոճի կամ լեզվի և կրկնարանությանց մակերեսային թերթությունները, որոնց կիանողիպինը որեք-որեք, հազիվ թե գգալի պիտի ըլլան գործին ներքին արժեքին հանկուցից տպավորության տակ:

Ավելի կարևոր ձեռնարկ մը պիտի ըլլա հրատարակումը Խրիմյանի նամակներուն և ինքնագիր կոնդակներուն, որոնց մեկ չնչին մասը միայն լուս տեսած է դեռ այլևայլ պատեհություններով թերթերու մեջ ցիրուցան:

Անարթեատ պարզության մարդը հոգիի այդ ինքնարուի արտահայտությանց մեջ է մանավանդ որ կտեսնվի իր բովանդակ առաջինու գեղեցկությամբը:

Գրի առնված կենդանի բառեր են ասոնք, իրենց մեջ է Հայրիկ, որչափ բեմի՝ նոյնքան մտերմության մարդը, հրապարակախոսն ու քարեկամը, միշտ հայրենիքի խորհուրդնեն տարված, միշտ ազգային կանքի ընդհանուր և առօրյա հարցերովն համագրավված:

Պիտի ապրի այդ գրականությունը. արցունքով և սփոփանքով պիտի կարդան զայն

ապագա սերունդները, վասն զի հայ հոգվովն ամենահարազատ ցոլացումն է ան, բազմակողմանի շնորհներով գեղեցկացած իմացականութենու մը պիտիսմակված:

Ամենքը անոր մեջ պիտի տեսնեն հինաւուրց ցեղի մը ամենեն ազնվական տիպարներն մնի, որ գաղտնիքն ունի սիրտերը հմայելու:

Մեկը՝ անոր վրա պիտի ճանչնա իր երազին մտապատկերին առջև ունալնացած տերվիշը, մյուսը Սատվածաշունչի ներզործությամբը առլեցուն և տեսիլբե-տեսիլը հափշտակվող Մարգարեն, ոմանք՝ պատվական Ռուտիցիշը, որիշներ՝ հայրենանվեր Գործիշը և անառիկ Գաղափարի մը անկեղծ Առարյալը, ու ամենքը՝ գործի՝ սիրո՛ բարության և խանդադատանքի մարմնացյալ Անհատականությունը, որ միակ անուն մը ունեցավ, ազգին ծոցեն՝ ժողովորդին սրտեն փրթած բան մը. Հայրիկ:

Այս անունը ամենուն մտածությանը մեջ պիտի գծագրեն քաղցրությամբ օծուն դեմք մը, շրջանակված խորհրդապատկերներու շարքով մը, որուն կազմիչ տարրերը պիտի ըլլան խաչքարի մը շուրջը՝ կաթողիկեի մը կիսաստվերը, հովիկեն գրկված գառնուկ մը՝ արորի մը մաճը՝ փետուրե գրիչ մը որ արծվելսուց կաղամարի մը մեջ է թաթխված և խաչանիշ արտահուրակներ:

Իր գիրքերնեն հատվածներ պիտի կարդացվին եկեղեցվոյն մեջ, իր մահվան օրը պիտի հիշատակվի կրոնքին ու ազգին երախտավոր գործիներու շարքին մեջ:

Ու նայելով սիրփած Հայաստանի պատկերին՝ զոր ամեն հայ պիտի ունենա իր տան մեջ Հայրիկի պատկերին դիմացը, ամենքը պիտի ըստն յորուի:

— Վայն որ չհասավ այս օրերուն:
(Էջ 219—222)

